

**ՀՖՖ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ 2009/2010 ԹԹ ԿԱՏԱՐՎԱԾ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Նախորդ մեր ժողովից անցել է գրեթե երկու տարի և մեր ֆուտբոլային ընտանիքում տեղի են ունեցել բազմաթիվ իրադարձություններ: Արձանագրվել են թե հաջողություններ, դրական փոփոխություններ և թե բացթողումներ, որոնց մասին հնարավորինս մանրամասն կանդրադառնամ այս հաշվետվությունում, սակայն մի հանգամանք կցանկանայի հատկապես ընդգծել հենց սկզբից: Իչպես նշել եմ իմ նախորդ հաշվետու ելույթներում, այնպես էլ այսօր ուզում եմ փաստել, որ մենք հավատարիմ ենք մնում մեր քաղաքականությանը և շարունակում ենք առաջ շարժվել այն ճանապարհով, որի մասին ես խոսել եմ դեռևս 8 տարի առաջ, երբ ստանձնեցի Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահի պաշտոնը: Այն ժամանակ որպես հայկական ֆուտբոլի զարգացման գերակա ուղղություններ նշեցի մանկապատանեկան ֆուտբոլի հեռանկարային զարգացումը, ֆուտբոլի առաջընթացին ուղղված ֆինանսական ներդրումների ապահովումը, դրամական շարժերի լիարժեք վերահսկումը և թափանցիկությունը, ներֆուտբոլային կյանքի կանոնակարգումն ու կարգապահությունը, առկա ֆուտբոլային ֆիզիկական ենթակառուցվածքների բարելավումն ու նորի կառուցումը, առկա ֆուտբոլային մասնագետների կատարելագործումն ու կրթումը և նոր, կարող ուժերի ներգրավումը, մասսայական ֆուտբոլի զարգացումը կամ ֆուտբոլի մասսայականացումը, ֆուտբոլային գույքային բազայի բարելավումը, կառուցվածքային բարեփոխումների իրականացումը և այլն:

Պետք է նշեմ, որ չնայած հասկանալի բարդություններին ու դժվարություններին, մնում ենք հաստատական և առաջնորդվում ենք դեռևս 8 տարի առաջ որդեգրած վերը նշված սկզբունքներով:

Մասսայական Ֆուտբոլ

Մասսայական ֆուտբոլի զարգացումը Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի վարած սկզբունքային քաղաքականություններից մեկն է: Եվ, եթե հիշում եք, դեռևս նախորդ ժողովի ընթացքում ձեռք ենք ներկայացրել «Ֆուտբոլը հանրակրթական դպրոցներում» ծրագրի մասին: Այսօր ուրախությամբ պետք է նշեմ, որ այն արդեն կայացած փաստ է: Այդ նպատակով, և մեր նախաձեռնությամբ ստորագրվեց եռակողմ պայմանագիր Սպորտի և երիտասարդության հարցերի, Գիտության և կրթության նախարարությունների և Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի միջև, համաձայն որի 2009 թվականի հունվարից 450

դպրոցներում փորձնական և ապա սեպտեմբերից բոլոր հանրակրթական դպրոցներում՝ ֆիզկուլտուրայի երրորդ դասաժամը կդասավանդվի “Ֆուտբոլ” առարկան:

Համաձայն նշված պայմանագրի՝ Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիան ապահովեց ուսուցիչների մեթոդական ձեռնարկի և “Ֆուտբոլ” դասագրքի պատրաստման ու տպագրության աշխատանքները, ուսուցիչների վերապատրաստման գործընթացը, ինչպես նաև տրամադրեց հանրակրթական դպրոցներին առարկայի դասավանդման համար անհրաժեշտ գույք և հանդերձանք:

ՀՖՖ կողմից 15000 տպաքանակով հրատարակվեց “Ֆուտբոլ” ուսումնամեթոդական ձեռնարկը, որը հեղինակվել է ՀՖՖ մասսայական ֆուտբոլի ինստրուկտոր, Ֆիզիկական Կուլտուրայի Հայկական Պետական ինստիտուտի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Սամսոն Հակոբյանի կողմից: Ձեռնարկը հաստատվել է Գիտության և կրթության նախարարության ազգային ինստիտուտի, իսկ մասնագիտական կարծիք տրվել է ֆիզկուլտուրայի ինստիտուտի կողմից:

Կազմակերպվեցին 42 տեսական և գործնական սեմինար պարապմունքներ 1450 հանրակրթական դպրոցների 2250 ֆիզկուլտուրայի ուսուցիչների համար, նվիրաբերվեց առարկայի դասավանդման համար անհրաժեշտ գույք՝ Գնդակներ – 10’334 հատ, Ժիլետներ – 17’430 հատ, տարբեր չափերի կոներ – 33’591 հատ, Օղակներ – 12’616 հատ, Դասագրքեր – 12’538 հատ:

Պատահական չէ, որ “Ֆուտբոլը հանրակրթական դպրոցներում” ծրագիրը ՈԻԵՖԱ-ում արժանացավ մեծ ուշադրության և պարգևատրվեց 3 կարգի բրոնզե պարգևով:

Այստեղ կցանկանայի նշել երկու կարևոր հանգամանքների մասին ևս: Նախ, որ “Ֆուտբոլ” առարկայի դասավանդումը բնավ էլ չի նշանակում զուտ ֆուտբոլային գիտելիքների ուսուցում, այլ այն ունի ընդհանուր մարզական ուղղվածություն և միտված է ուրախ և զվարճալի խաղերի կազմակերպման միջոցով զարգացնելու դպրոցականների շարժողական ունակությունները, որն էլ հենց տալիս է առարկայի դասավանդման համար կարևորագույն նշանակություն: Եվ երկրորդ, այն, ինչ մենք արեցինք, դա սկիզբն ու առաջին կարևոր քայլն էր միայն: Հիմա անհրաժեշտ է պետական պատկան մարմինների հետ համագործակցաբար հետևել ինչպես առարկայի դասավանդման որակին, այնպես էլ հոգ տանել գույքային բազայի թարմացման և կատարելագործման մասին: Այլապես, վերը նշված ողջ գործընթացն ու ներդրված միջոցներն ուղղակի կլինեն ապարդյուն:

Իսկ ընդհանուր առմամբ, հաշվետու ժամանակահատվածում անցկացվել են 975 մասսայական ֆուտբոլային միջոցառումներ, որոնց մասնակցել են ընդհանուր հաշվարկով 51'000 երեխաներ, մարզիչներ, սիրողական մարզիկներ, ուսանողներ, վետերաններ, քաղաքական գործիչներ, լրագրողներ և այլն: Բացվել են 32 "Բաց զվարճալի ֆուտբոլային դպրոցներ" շուրջ 9'000 մասնակիցնով, վերապատրասվել և կրթվել են մոտ 514 մարզիչ-ինստրուկտորներ, որոնք ստացել են միջազգային "C" արտոնագրի չափորոշիչների համապատասխան հավաստագրեր և իրավունք են ստացել աշխատելու 8-ից 12 տարեկան երեխաների հետ:

Ավելացրել ենք նաև մարզերում ՀՖՖ լիագոր ներկայացուցիչների քանակը՝ հասցնելով 17-ի (նախկինում նրանք չորսն էին), քանզի հավատացած են, որ այս ինստիտուտի շնորհիվ առավել ակտիվ և արդյունավետ կարող ենք նպաստել մարզերում ֆուտբոլի զարգացմանը:

Ահա և վերը նշված բոլոր ակտիվությունների և նախաձեռնությունների հիմքով ՀՖՖ-ն ՈՒԵՖԱ-ի կողմից պարգևատրվեց լավագույն 4 մրցանակներով՝ լավագույն մասսայական միջոցառում, լավագույն միջոցառում թերի զարգացած երեխանների համար, լավագույն ֆուտզալի միջոցառում և լավագույն վետերանների միջոցառում: Իսկ այս հուլիսին ՀՖՖ-ն արժանացավ ՈՒԵՖԱ-ի Մասսայական ֆուտբոլի խարտիայի համակարգում "հինգ աստղ" չափանիշի, ինչը վկայում է ՀՖՖ-ի մասսայական ֆուտբոլում կատարած արդյունավետ աշխատանքների մասին:

Մրցավարություն

Պետք է հենց սկզբից նշեմ, որ թերևս միակ ոլորտն է, որ չնայած իմ ողջ ուշադրությանն ու խստապահանջ մոտեցմանը, դեռևս ցանկալի արդյունքների չենք հասել: Դեռևս 2007-2008 թվականներից սկսեցինք համակարգային բարեփոխումներ, որը հիմնված էր միջազգային լավագույն փորձի և ՈւԵՖԱ-ի մրցավարական կոնվենցիայի պահանջների վրա: Ըստ նույն պահանջների վերախմբագրեցինք մրցավարական և տեսչական կանոնադրություններն ու կանոնակարգերը և վերակազմակերպեցինք ՀՖՖ մրցավարական դպրոցը: Հաջողությամբ իրագործվում էր «հեռանկարային մրցավարների վարպետության բարձրացման ծրագիրը», որի արդյունքում կատարեցինք սերնդափոխություն:

Կարծես թե համակարգային բարեփոխումները, պետք է տային իրենց ցանկալի արդյունքները, սակայն, ինչպես և ինքներդ տեսաք՝ այս

տարվա մրցավարական արդյունքները մեզ ստիպեցին գնալու ամենախիստ և ամենավճռական քայլերի:

Այժմ արդեն համապատասխան հանձնարականները տրված են և մենք ամենաարագ կարգով պատրաստելու ենք թե նոր երիտասարդ կադրեր և թե ընտրելու ենք գործող երիտասարդ մրցավարներից լավագույններին՝ առավել ինտենսիվ կրթական և մարզումային գործընթաց ապահովելու նպատակով:

Այնուամենայնիվ պետք է հայտարարեմ, որ ոչ մի հանգամանք չի կարող մեզ շեղել մեր ուղեծրից և անկախ վերը նշված հանգամանքներից՝ անելու եմ ամեն ինչ, որ ունենանք բարձրակարգ մրցավարություն: Եվ ունենալու ենք:

Արտոնագրման համակարգ

Եվս մի կարևոր ոլորտ, որտեղ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան, որպես ֆուտբոլային քաղաքականություն իրականացնող կառույց արձանագրել է լուրջ առաջխաղացում և զարգացում: Դա ակումբների արտոնագրման ոլորտն է: Հենց արտոնագրման համակարգում է թաքնված այն զարգացման ճանապարհը, որն ՈՒԵՖԱ-ի կողմից դիտվում է որպես ակումբների գործունեության համակարգման միջոց և որով պետք է անցնի մեր ֆուտբոլը՝ համապատասխանելու համար եվրոպական ֆուտբոլային չափորոշիչներին:

Հաշվետու ժամանակահատվածում անցկացվեցին ակումբների արտոնագրման 6-րդ և 7-րդ մրցաշրջանները:

Եվ եթե 2010թ-ի մրցաշրջանն անցավ բնականոն հունով, ապա 2009թ-ի մրցաշրջանը եղավ իրադարձություններով բավականին առատ, քանի որ դա 1-ին դեպքն էր, երբ ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգի 1-ին ատյանի և բողոքարկման մարմինները մերժեցին ՈՒԵՖԱ-ի Եվրոպայի Լիգայում մասնակցելու հավակնություն ունեցող ակումբի արտոնագիրը: Խոսքս, ինչպես հասկացաք՝ “Արարատ”-ի մասին է: Այդ առումով անհրաժեշտ է նշել, որ որքան էլ մեզ փորձեցին անհիմն մեղադրել կամայականություն դրսևորելու մեջ, այնուամենայնիվ, 2009թ-ին շվեյցարական “SGS” աուդիտորական ընկերության և 2010թ-ին ՈՒԵՖԱ-ի կողմից անցկացրած աուդիտներն արձանագրեցին ոչ միայն այն հանգամանքը, որ ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգը գործում է բնականոն կերպով և տարեցտարի էլ ավելի զարգանում և բարելավվում է, այլ նաև այն, որ վերը նշված որոշումները լիովին համապատասխանում էին ՈՒԵՖԱ-ի արտոնագրային կանոնների թե տառին և թե ոգուն:

2009-2010թթ-երի ընթացքում ՀՖՖ Արտոնագրման բաժնի աշխատակիցներից և ակումբների ներկայացուցիչներից բաղկացած աշխատանքային խումբը մշակեց և ս.թ. հոկտեմբերի 15-ին ՀՖՖ Գործադիր կոմիտեի ուշադրությանը ներկայացրեց ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգի նոր կանոնակարգը, որը հիմնված է ՈՒԵՖԱ-ի ակումբների արտոնագրման և ֆինանսական արդար խաղի կանոնակարգի վրա: Հաշվի առնելով այն բարդացված խնդիրները, որն ՈՒԵՖԱ-ն այսուհետև առաջադրելու է իր անդամ-ֆեդերացիաների ակումբներին, արդեն իսկ անցկացրել ենք խորհրդատվություններ ակումբների համար՝ տալով համապատասխան պարզաբանումներ: Ասեմ ավելին, ՀՖՖ-ն առաջիններից է ազգային ասոցիացիաների շարքում, որոնք արդեն իսկ անցկացրել են սեմինար-հանդիպում ՈՒԵՖԱ-ի Արտոնագրման բաժնի ներկայացուցչի մասնակցությամբ: Հիշեցնեմ, որ այն կայացավ ս.թ. հոկտեմբերի 15-ին ՀՖՖ-ի նորակառույց ակադեմիայում:

Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում ակումբների արտոնագրման համակարգը կրկին ապացուցեց իր կենսունակությունն ու գոյության իրավունքը, քանի որ դրա միջոցով հնարավոր եղավ որոշակիորեն օժանդակել հայկական ակումբային ֆուտբոլի ներքին կյանքի կանոնակարգմանը:

Միաժամանակ ՀՖՖ Արտոնագրման բաժինը արդեն երեք մրցաշրջան է, ինչ կազմակերպում է իր իսկ աշխատանքների որակական համապատասխանեցումը ՈՒԵՖԱ-ի որակի Ստանդարտին, որը հիմնված է ԻՍՕ-9001:2000 որակի միջազգային ստանդարտի վրա: Բաժնի և համակարգի աշխատանքների համապատասխանելիությունը եվրոպական ստանդարտներին ամենամյա ստուգումների միջոցով քննում է ՈՒԵՖԱ-ի կողմից լիազորված, միջազգային ճանաչում ունեցող “SGS” շվեյցարական աուդիտորական ընկերության ներկայացուցիչը: Ավելին, ՀՖՖ արտոնագրողներն իրենց առջև դրել են խնդիր՝ 3 տարվա ընթացքում ստանալ ԻՍՕ-9001:2008 որակի միջազգային ստանդարտ, ինչը կլինի ևս մեկ քայլ առաջ ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգի զարգացման հարցում:

Մարզչական կրթական համակարգ

Ֆուտբոլի զարգացման երկարաժամկետ հեռանկարային ծրագրի կարևորագույն բաղկացուցիչներից մեկն, իհարկե, ինտելեկտուալ ենթակառուցվածքների զարգացումն է ընդհանրապես, և մարզչական

կադրերի կրթումն ու վերապատրաստումը՝ մասնավորապես: Այս ուղղությամբ ևս կատարվել է հսկայածավալ աշխատանք, և որ ամենակարևորն է՝ որակապես շահեկանորեն տարբերվող նախորդ ժամանակահատվածներից:

Նշեմ, որ ՀՖՖ տեխնիկական տնօրեն Ֆլեմինգ Սերիցլևի հեղինակությամբ պատրաստվեցին "Բ" և "Ա" արտոնագրերի համար ձեռնարկներ, որոնք անցան մանրակրկիտ միջազգային փորձաքննություն և արժանացան ՈՒԵՖԱ-ի ամենաբարձր գնահատականին: Իսկ դա նշանակում է, որ մեր արտոնագրվող մարզիչներն արդեն իրենց ձեռքերում ունեն մայրենի լեզվով հրատարակված ձեռնարկներ և անհրաժեշտություն չունեն լրացուցիչ պարզաբանումների համար դիմելու օտարալեզու գրականության:

2010 թվականին կազմվեց և իրագործվեց մարզչական "Ա" և "Բ" արտոնագրման դասընթացների նոր ծրագիր, համաձայն որի այն բաժանվում է մի քանի փուլերի, իսկ "Ա" դասընթացն իր մեջ ներառում է նաև ուսուցողական ճամփորդություն: Այս նոր մոտեցումն ակնհայտորեն առավել արդյունավետ է, քանզի յուրաքանչյուր մարզիչ որոշակի չափաքանակով գիտելիքներ ստանալուց հետո կարողանում է այն արագ յուրացնել, ապա կյանքի կոչել գործնականորեն, և հետո միայն ստանում է գիտելիքների հաջորդ չափաբաժինը:

Այդ ծրագրի շրջանակներում առաջին անգամ "Ա" արտոնագրի մասնակիցներն հնարավորություն ստացան արտագնա դասընթացն անցկացնել Դոնեցկում և կարողացան հետևել տեղի երկու ակումբների՝ Մետալուրգի և Շախտյորի խաղերին ու պարապմունքներին, մանկապատանեկան թիմերի աշխատանքներին, ինչպես նաև երկու ակումբների գլխավոր մարզիչների փիլիսոփայությանը:

Իսկ Երևանյան փուլի դասընթացներին պարբերաբար մասնակցել են ինչպես ՈւԵՖԱ-ի, այնպես էլ հրավիրյալ այլ մասնագետներ: Զանազան նեղ մասնագիտական թեմաներով դասախոսություններով հանդես են գալուց զատ՝ նրանք իրականացնում էին դասընթացների որակի վերահսկողություն և կազմում գեկույցներ: Եվ ավելորդ չեմ համարում նշել, որ ՈւԵՖԱ-ի ներկայացուցիչ Էրիկ Ռուտենյուլերն իր յուրաքանչյուր այցից հետո ՈւԵՖԱ-ին է ներկայացրել բացարձակապես դրական կարծիք և դասընթացն ընդհանուր առմամբ գնահատել գերազանց: Այդ գնահատականը մեզ հնարավորություն ընձեռեց դիմելու ՈւԵՖԱ՝ 2012 թվականից Հայաստանում ՈւԵՖԱ-ի "Պրո" արտոնագիր անցկացնելու իրավունք ստանալու նպատակով: Դասընթացը 2012-ից անցկացնելու պատճառ է հանդիսանում այն հանգամանքը, որ

անհրաժեշտ է հավաքել մի շարք նյութեր, կապ հաստատել մի քանի մասնագետների հետ դասախոսություններ կարդալու նպատակով, ինչպես նաև կազմել հստակ ու երկարաժամկետ ծրագիր այնպիսին, ինչպիսին կազմվել է "Ա" դասընթացի համար:

ՈՒԵՖԱ-ից արդեն ստացել ենք նախնական համաձայնություն "Պրո" արտոնագրի դասընթաց անցկացնելու համար, և այդ նպատակով 2011 թվականի հունվարին նախատեսվում է ՈՒԵՖԱ-ի ՋԻՐԱ Պանելի երկու ներկայացուցիչների այցը Հայաստան՝ տեղում իրավիճակին ծանոթանալու և վերջնական գնահատական տալու համար: Այդ ներկայացուցիչները հետագայում կլինեն հայաստանյան "Պրո" դասընթացի անցկացման համակարգողներ:

Հաշվի առնելով, որ լավ դարպասապահների պատրաստման խնդիրներ ունենք, որոշել ենք նաև 2011 թվականից անցկացնել առանձին մարզչական դասընթացներ հատուկ դարպասապահների մարզիչների համար: Կսահմանվի դարպասապահների մարզիչների երկու առանձին որակավորում՝ "Բ" և "Ա" կարգի: Այդ դասընթացին իրավունք կունենան մասնակցել միայն այն մարզիչները, ովքեր կունանան մարզչական հիմնական "Բ" արտոնագիր: Նախատեսվում է դասընթացին հրավիրել օտարերկրյա մասնագետների, ովքեր միանշանակ կբարձրացնեն դասընթացի որակը և խորն ու հիմնարար գիտելիքներ կհաղորդեն մեր դարպասապահների մարզիչներին:

Ընդհանուր առմամբ, հաշվետու ժամանակահատվածում անցկացվել են 2 "Ա" և 2 "Բ" կարգի մարզչական արտոնագրման դասընթացներ 69 մասնակիցներով: ՈւԵՖԱ-ի "Ստադի Գրուպ" ծրագրի շրջանակներում 44 մարզիչներ և տվյալ ոլորտի այլ մասնագետներ Բելգիայում, Գերմանիայում, Ռուսաստանում և Խորվաթիայում մասնակցել են "Լավագույն Փորձի Փոխանակման" սեմինարների: Յուրաքանչյուր նման սեմինարից հետո ՀՖՖ շտաբբնակարանում անցկացվել են "Լավագույն Փորձի Փոխանցման" սեմինարներ բոլոր մյուս մարզիչների համար: Կազմակերպվել են "Թարմացման" կուրսեր արտոնագրված մարզիչների համար, որի արդյունքում դրանց մի մասը վերանայվել է և 51 մարզիչների արտոնագրեր "հետ են կանչվել":

Ինչպես տեսնում եք, մարզիչների կրթման, վերապատրաստման և վերավորակավորման համար կատարում ենք և շարունակելու ենք կատարել լուրջ ներդրումներ, քանզի համոզված եմ, որ ժամանակակից գիտելիքներով հարուստ մասնագետներով է միայն հնարավոր հասնել ցանկալի արդյունքների:

Մրցումների կազմակերպում և անցկացում

Այստեղ կարծում եմ կարելի խոսել նաև թվերի լեզվով: Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպել և անցկացրել ենք պրոֆեսիոնալ, մանկապատանեկան, կանանց և աղջիկների ֆուտբոլի և ֆուտզալի 68 տարբեր մրցումներ և մրցաշարեր: Տեղի են ունեցել ընդհանուր հաշվով 2548 հանդիպումներ, որոնց արդյունքները մշակվել և գրանցվել են տեղեկատվական բազայում: Վերագրանցվել են 3819 ֆուտբոլիստներ, լրացվել և տպագրվել է ավելի քան 4000 ֆուտբոլիստի անձնագիր, պատրաստվել և տպագրվել է մոտ 5500 մասնակցի քարտեր: Եվ եթե նշեմ մրցումների կազմակերպման և անցկացման նպատակով ինֆորմացիայի մշակման գործառույթների միջին տարեկան թվաքանակը՝ մոտ 60'000, ապա պարզ կդառնա, որ այստեղ առանց լուրջ համակարգչային ծրագրային լուծումների գրեթե անհնար է: Այդ իսկ պատճառով, 2009-2010 թվականների ընթացքում ՀՖՖ տեղեկատվական համակարգը ենթարկվեց լուրջ արդիականացման, վերամշակվեցին և ներդրվեցին այնպիսի բաժիններ ինչպիսիք են ՄԿԱ բաժանմունքի, արտոնագրման, տրանսֆերների, հաշվապահության, ֆուտբոլիստի անձնագրերի և մասնակցի քարտերի տերմինալները: Տեղի ունեցավ համակարգում մուտքագրված ինֆորմացիայի տեղափոխություն դեպի նորաստեղծ համակարգ: Արդիականացվեց Տեղեկատվական Բազայի (ՏԲ) ադմինիստրատիվ հատվածը, որտեղ ներդրվեց համակարգի ինքնապահպանման և անվտանգության համակարգերը, վերամշակվեց և ներդրվեց այսպես կոչված “նոր տարվա գործընթաց”-ը, որը թույլ է տալիս ամեն հաջորդ տարվա համար ստեղծել տվյալ տարվա ՏԲ-ն՝ նախորդ տարիներից տեղափոխելով անհրաժեշտ ինֆորմացիան:

Արդիականացվեցին նաև ֆուտբոլիստի անձնագրերի և մասնակցի քարտերի տպագրության, հաշվապահության, տրանսֆերների և մրցավարական բաժինների համար նախատեսված համակարգերը, ներդրվեց մասնակցի քարտերի նույնականացման համակարգը, ՀՖՖ հավաքականների և տեխնիկական տնօրինության բաժնին վերաբերվող ՏԲ-ի հատվածը:

Նշված ժամանակահատվածում վերաձևավորվեց և ներդրվեց խաղերի կազմակերպման և անցկացման հիմնական համակարգերը, այսպես կոչված գործընթացները, դրանք են՝

1. Ֆուտբոլիստի գրանցման գործընթաց ,
2. Հայտավորման գործընթաց,
3. Արձանագրության մշակման գործընթաց,
4. Պայմանագրերի գրանցման գործընթաց,
5. Խաղացանկերի կազմում:

Այս բոլոր համակարգերի ներդրման արդյունքում նվազագույնի հասցվեց մարդկային գործոնը, ասել է թե տվյալների մուտքագրումից հետո համակարգն ինքնուրույն ստուգում և ցուցադրում է այն խնդիրները, որոնք առաջ են գալիս տվյալ գործընթացների ժամանակ և հնարավորություն է տալիս օգտագործողին ճիշտ մուտքագրել և մշակել ինֆորմացիան:

Ֆիզիկական ենթակառուցվածքներ

Այժմ կուզենայի անդրադառնալ թերևս իմ համար ամենակարևոր խնդրին՝ ֆիզիկական ենթակառուցվածքների բարելավմանը և մեր ապագա ծրագրերին:

Ինչպես և նախատեսված էր, այս տարի շահագործման հանձնեցինք ՀՖՖ Տեխնիկական Կենտրոն – Ակադեմիան: Համալիրը, որպես զուտ մարզական կառույց, աննախադեպ է տարածաշրջանում թե իր ծավալներով և թե ներդրումների մեծությամբ: Այն բաղկացած է 13'000 ք/մ ընդհանուր մակերեսով հիմնական մասնաշենքից, ինժինեռական կառույցներից, արհեստական խոտածածկույթով 1 և բնական խոտածածկույթով 4 խաղադաշտերից, բացօթյա լողավազանից, թենիսի 4 խաղահրապարակներից, բացօթյա սննդի և սպասարկման այլ կառույցներից:

Հիմնական մասնաշենքում ստեղծված են մարզիկների ուսումնամարզական հավաքների, հանգստի և վերականգնողական գործընթացի կազմակերպման համար բոլոր անհրաժեշտ պայմանները.

- ծածկած մարզադահլիճ,
- հյուրանոցային համալիր՝ 98 մահճակալներով,
- ուսումնական կենտրոն,
- ֆիթնես սրահ,
- ծածկած լողավազան,
- հանդերձարան-ցնցուղարաններ,
- վերականգնողական-բժշկական կենտրոն,
- սննդի սպասարկման սրահներ,
- ակտիվ հանգստի համար նախատեսված սրահներ,
- և այլն:

Համալիրը կարող է ծառայել նաև թիմային և անհատական մի շարք այլ մարզաձևերի, ինչպիսիք են վոլեյբոլը, բասկետբոլը, ձեռքի գնդակը, ծանրամարտը, ըմբշամարտը, շախմատը և այլն:

Ներդրումների ընդհանուր ծավալը կազմել է մոտ 12 մլն ԱՄՆ դոլար, որից 7'475'000 (62,3%) ՈւԵՖԱ-ի կողմից, 400'000 (3,3%) ՖԻՖԱ-ի կողմից և 4'125'000 (34,4%) ՀՖՖ կողմից: Ծրագիրը ՀՀ կառավարության կողմից որակվել է որպես բարեգործական և ազատվել է ԱԱՀ-ից, իսկ ներկրվող գույքն ու սարքավորումները՝ մաքսատուրքից:

Համալիրի շինարարության երկրորդ փուլով նախատեսվում է կառուցել ևս 6 խաղաղաշտեր, որոնցից մեկը 2'500 նստատեղերով ծածկած տրիբունայով և 3'000 քառակուսի մետր օգտակար մակերեսով սպասարկման շինություններով, անհրաժեշտ ինժինեռական կառույցներ և այլն: Ներդրումների ծավալը կկազմի մոտ 3 մլն ԱՄՆ դոլար:

Կասկածից վեր է, որ այս հսկա մարզակառույցը լուրջ խթան կհանդիսանա թե մասսայական, թե մանկապատանեկան, թե ակումբային ֆուտբոլի, և թե ազգային հավաքականների և թե ընդհանուր առմամբ սպորտի զարգացման համար: Սակայն ձեզ հետ ուզում եմ կիսել իմ զգացողությունները համալիրի շահագործման հանձնելուց հետո, որն անգամ իմ ամենալավատես ակնկալիքներից էլ վեր էր: Ակադեմիան հայտնվեց դիմորդների մի այնպիսի "գրոհի" տարափի ներքո, որ անգամ ստիպված եղանք դադարեցնել ընդունելությունը՝ մինչև մյուս խաղաղաշտերի պատրաստ լինելը: Ուրախացել եմ յուրաքանչյուր ակադեմիա ընդունված երեխայի ուրախությամբ, ով ուրախանում էր այնպես, կարծես թե իրականացել էր իր կյանքի ամենամեծ երազանքը, և տխրել եմ միևնույն ժամանակ, որ դեռևս չենք կարողանում ապահովել մեր բոլոր երեխաների այդ "երազանքը":

Այս ամենն ինձ ավելի է պարտավորեցնում, և ցանկանում եմ մեկ անգամ ևս հաստատել մեր՝ ֆուտբոլային ենթակառուցվածքների բարելավման ծրագրի գերակայությունը: Եվ հենց այս ենթատեքստում էլ պետք է ձեզ տեղեկացնեմ, որ արդեն իսկ Գյումրիի քաղաքապետարանից ստացել ենք 6 հեկտար հողատարածք, կատարվել են նախագծանախահաշվային աշխատանքները և շուտով կսկսենք մանկապատանեկան մարզադպրոցի շինարարական աշխատանքները: Բառացիորեն մի քանի օր առաջ ստորագրեցինք նմանատիպ մի պայմանագիր նաև Վանաձորի քաղաքային իշխանությունների հետ, համաձայն որի ՀՖՖ-ին է հատկացվել քաղաքային մարզադաշտը՝ 5,1 հեկտար հողատարածքի հետ միասին, որն էլ ևս համապատասխան նախապատրաստական աշխատանքներից հետո կսկսենք վերակառուցել:

Միևնույն ժամանակ պետք է նշեմ, որ հաշվետու ժամանակահատվածում նաև, ինչ որ առումով "պարտադրված" ենք եղել կատարելու բավական լուրջ ներդրումներ Հանրապետական

մարզադաշտի վերակառուցման նպատակով: Ինչու "պարտադրված", որովհետև մարզադաշտի լուսավորության համակարգն ուղղակի արդեն չէր համապատասխանում միջազգային խաղերի անցկացման ստանդարտներին: Ամբողջությամբ վերակառուցեցինք լուսավորության համակարգը, որն ապահովում է պահանջվող նվազագույնից զգալի բարձր լուսավորություն և այսօր աշխարհում քիչ կան մարզադաշտեր, որտեղ առկա է 3000 լյուքս և բարձր լուսավորություն:

Նույնը կարող եմ ասել նաև բարձրակարգ սպասարկման սրահների մասին, հանդերձարանային բլոկի մասին, որոնք ամբողջությամբ վերակառուցեցինք և վերանորոգեցինք դեռևս 2009թ սկզբին:

Անդրադառնալով ֆուտբոլի գույքային բարելավմանն ուղղված աշխատանքներին, պետք է նշեմ միայն թվեր, որոնք, կարծում եմ արդեն շատ բան են ասում: Միայն վերջին երկու տարիների ընթացքում ձեռք բերվել, անհատույց ստացվել և բաշխվել է մեր ֆուտբոլային ընտանիքի անդամներին շուրջ 110 միլիոն դրամ արժողությամբ մարզական գույք, հանդերձանք և հիմնական միջոցներ:

Խոսելով ֆինանսական ներդրումների մասին, չեմ կարող չանդրադառնալ ֆինանսական առումով բավական անհաջող, ես կասեի հնարավոր ամենաանհաջող վիճակահանությանը, որ մենք ունեցանք այս նախընտրական փուլում: Սա ուղղակի էապես նվազեցնում է մեր ներդրումային հնարավորությունները: Սակայն նաև ձեզ պիտի տեղեկացնեմ, որ մենք արդեն 2011 թվականի ավարտին կազատվենք իմ կողմից բազմիցս հիշատակված գրեթե "ստրկացուցիչ" հեռուստափրավունքների պայմանագրից, որն ստորագրվել էր դեռևս 2000 թվականին և ամենայն հավանականությամբ կունենանք ՈւԵՖԱ-ի հետ մարկետինգային իրավունքների կենտրոնացման պայմանագիր, որը մեզ կտա կայուն եկամուտներ՝ անկախ որևէ վիճակահանությունից: Իսկ վերջինս, իհարկե նշանակում է կայուն ֆինանսական պլանավորում և երկարաժամկետ հեռանկարային ծրագրերի կայուն ֆինանսավորում:

Մինևույն ժամանակ չեմ կարող չանդրադառնալ մեր Հայաստանյան գործընկերներին՝ Վիվա Սելլ Էմտեկս, Գրանդ Քենդի, Երևան Սիթի և Հայրուսգազարդ ընկերություններին, ինչպես նաև Զարգացման Հայկական Բանկին, առանց որոնց ուղղակի դժվար կլիներ ապահովել վերը նշված ներդրումները: Շնորհակալություն:

Մարզական ցուցանիշներ

Ինչպես և նախորդ հաշվետվություններում, այնպես էլ այսօր, մարզական ցուցանիշների մասին ուզում եմ խոսել հաշվետվության վերջում: Սկսեմ Բարձրագույն խմբի առաջնությունից: Կարծում եմ, որ վերջին երկու տարիների առաջնություններն իրենց պայքարի սրությամբ, թիմերի խաղային որակներով և մարզչական տակտիկական լուծումներով քայլ առաջ էին՝ համեմատած նախորդ առաջնությունների հետ: Բայց միևնույն ժամանակ կարծում եմ կհամաձայնեք, որ դեռ հեռու ենք ուժեղ առաջնություն համարվելուց, և դեռ շատ անելիքներ ունենք այդ ուղղությամբ:

Ինչ վերաբերվում է հավաքական թիմերին, ապա պետք է ասեմ, որ այստեղ մի փոքր փոխել ենք մեր մարտավարությունը՝ կապված մանկապատանեկան հավաքականների հետ: Խոսքը վերաբերվում է նրան, որ այս հավաքականների համար որպես առաջնահերթություն դիտում ենք Ազգային հավաքականի համար սերունդ պատրաստելու խնդիրը, նմանատիպ սխեմաներով խաղալու կարողությունը և միջազգային խաղերի փորձը: Մա իհարկե չի նշանակում, որ արդյունքները կարևոր չեն: Խնդիրը միայն առաջնահերթության մեջ է:

Այստեղ միայն պետք է փաստեմ մեր երիտասարդական հավաքականի բավական հաջող և գրագետ խաղը: Ցավոք սրտի, որոշ օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքների բերումով այս թիմը, որը նույնիսկ նույն մրցաշարի մասնակից երկրների մասնագետների կարծիքով ամենաուժեղն էր ենթախմբում, չկարողացավ դուրս գալ եզրափակիչ փուլ և ես կարծում եմ, որ այս իմաստով թե մենք և թե մարզիչները լուրջ հետևությունների կարիք ունեն:

Անդրադառնալով Ազգային հավաքականին, կցանկանայի ձեզ հիշեցնել դեռևս երկու տարի առաջ այս ամբիոնից ասված իմ խոսքերը. "Բայց ես հակված չեմ փնտրել մեղավորներ: Իմ գործունեության տարիներին մենք որդեգրել ենք մոտեցումներ, որի միջոցով Հայաստանի հավաքականը քայլ առ քայլ կարող ենք դարձնել մեր երազանքների հավաքականը և այդ քաղաքականությունն իրականացրել ու իրականացնելու ենք առանց շեղվելու: Մենք կարողացել ենք հավաքականում ներարկել մտածողության ու մոտեցումների նոր որակներ: Գնալով համարձակ որոշումների՝ կարողացել ենք հասնել նրան, որ այսօր ազգային հավաքականում հանդես են գալիս բազմաթիվ երիտասարդ ֆուտբոլիստներ, որոնց վրա արդեն իսկ կարելի է հույս դնել: Պահպանելով առողջ սերնդափոխության սկզբունքները՝ կարողացել ենք պահպանել վետերանների և երիտասարդների այն օպտիմալ հարաբերակցությունը, որը կարող է ապահովել ազգային հավաքականի

առաջընթացը: Շուտով մենք բոլորս կհամոզվենք ու ականատեսը կլինենք կատարված քայլերի մտածված, հեռանկարային և շարունակական լինելուն: "

Ասվածին այսօր ավելացնել ոչինչ չեմ ցանկանում:

Ինչնիցե, մենք ականատեսն ենք մեր հավաքականի կայուն, գրագետ և արդյունավետ ելույթներին, որը մեզ բոլորիս մեծ հույսեր է տալիս: Սակայն ես մարդկային այն տեսակին չեմ դասվում, ովքեր շատ արագ ոգևորվում և հանգստանում են ձեռք բերվածով, այլ ճիշտ հակառակը՝ համոզվելով մեկ անգամ ևս տարվող քաղաքականության ճիշտ ուղղության մեջ, առավել հետևողական ու խստապահանջ սկզբունքներով շարունակելու եմ մեր ծրագրերի իրագործումը:

Նշեմ, որ սույն հաշվետվությունն ընդգրկում է ՀՖՖ հիմնական ուղղությունների և սկզբունքային ու ծրագրային մոտեցումների մասին դրույթները միայն:

Շնորհակալություն ու շաղրության համար: